## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 43

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ, 8-րդ, 9-րդ հոդվածներով, <<ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով սեփականատեր Նարիման Մկրտչյանի 04.06.2018թ. դիմումը՝ *որոշում եմ.*

1. Նարիման Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Նոր Երզնկայում գտնվող 0,15 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը (սեփականության իրավունքի վկայական թիվ 0169314) փոփոխել՝ գործառնական նշանակությունը դարձնելով պտղատու այգի՝ հնդավոր:
2. Որոշման օրինակը հինգ օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ԿԱԱԳԿԿԿ համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ սեփականության իրավունքի վկայականում համապատասխան ուղղում կատարելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. ______
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 44

## ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Նոր Երզնկա համայնքում հաստատել.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝

3) մինչև սույն թվականի հունիսի 7-ը ներկայացնել Նոր Երզնկա համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

4) յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ Մարդոյան Գրիգորին՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20__ թ.__________ —
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 45

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1.Նոր Երզնկա համայնքի 8-րդ փողոցի 6-րդ տան բնակչուհի՝ հանգուցյալ Անահիտ Գասպարյանի ընտանիքին տրամադրել ֆինանսական օգնություն 30000 (երեսուն հազար) դրամ:
2. Հանձնարարել գլխավոր մասնագետ Հ. Նազարյանին բյուջեի համապատասխան հոդվածից կատարել վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. ____________
գ.Նոր Երզնկա